# ԱՐՇՎԻ ՏԱՐԲԵՐ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐՈՎ ԿՆՔԱԴՐՈՇՄՆԵՐ, ԳԵՄԱՆԵՐ ԵՎ ՔԱՆԴԱԿՆԵՐ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Արտաշատի V բլրից հայտնաբերված կնքադրոշմների արխիվում*[1] *(մ.թ.ա. IIդ. 59թ.) կա մի խումբ, որոնց մակերեսին պատկերված են առանձին և կենդանիների վրա կանգնած արծիվներ: Դրանցից մի մասի վրա արծիվը(ֆաս), երբեմն տարածած կամ բարձրացրած թևերով է, գլուխը թեքած աջ կամ ձախ: Նման մի կնքադրոշմի վերևում կիսալուսին է պատկերված (աղ. I, 5), որը խորհրդանշում է արծվի սրբազան թռչուն լինելը: Արծվի պատկերը տարածված էր հերալդիկայում, քանի որ այն համարվում էր արքայական թռչուն: Կենաց ծառի երկու կողմերին հերալդիկ դիրքով կանգնած ուրարտական մի պատկեր հայտնի է Ադիլջևազից*[2]*: Արծիվը Աքեմենյան թագավորների զինանշանն էր: Համաձայն Էլիանի, Աքեմենյան դինաստիայի հիմնադիր Աքեմենին կերակրել է արծիվը*[3]*: Նեմրուդ լեռան վրայի դամբարան-սրբավայրում Դարեհ Ի-ի տիարայի ժայռավենը զարդարված է արծիվներով*[4]*: Ուշագրավ են Էրեբունիի քաղաքային թաղամասից հայտնաբերված արծաթե ռիտոնի հեծյալի, մեդական տիպի գլխարկի աջ ու ձախ կողմերին հերալդիկ դիրքով, թևերը բացած արծվի պատկերները (մ.թ.ա. IVդ. առաջին կես)*[5]*: Արծիվը որպես զինանշան է ծառայել նաև Երվանդունիներին, որոնցից այն ժառանգել են Արտաշեսյանները: Այդ են վկայում Տիգրան II-ի թագի վրա պատկերված արեգակի երկու կողմում կագնած գլուխները ետ, դեպի արևը դարձրած արծիվները*[6]*:*

*Ուշագրավ են արծվի տարբեր զուգադրումներով թեմաները: Պատկերներից մեկում արծիվը կանգնած է գնգի (երկրագնդի) վրա (աղ. I, 27): Գունդը ցույց է տալիս աշխարհի վրա իշխելու ձգտում, որը Կեսարի սլաշտամունքային խորհրդանշաններից մեկն էր: Այն օգտագործում էին նաև Անտոնիոսն ու Օկտավիանոսը՝ չթաքցնելով աշխարհին տիրելու իրենց*

---

[1] Z h o r e s K h a c h a t r i a n. The Archives of sealings found at Artashat (Artaxata). Archives et sceaux du monde hellenistique.– "Bulletin de correspondance hellénique" (BCH). Supplement 29. Paris-Athenes, 1996, p. 365–370, pl. 73–76.

[2] E. B i l g i ç, B. O g u n. Excavations at Kef Kalesi of Adilgevaz, 1964 – "Anatolia", Vol. 8, 1965, fig. 2; А. Д е м и р х а н я н. К мифопоэтическим истокам геральдических композиций (в связи с интерпретацией урартского рельефа из Кеф-Калеси). – "Культурное наследие Востока", Л., 1985, с. 137 – 138.

[3] Г. Т и р а ц я н. Культура древней Армении VI в. до н.э. – III в. н.э. (по археологическим данным). Ереван, 1988, с. 53.

[4] R. G i r s h m a n. Iran, Parthians and Sassanians. Tames and Hudson, 1962, fig. 78.

[5] Ж. Х а ч а т р я н, А. М а р к а р я н. Эребунийский ритон со всадником. – "Вопросы истории Армении". Сборник научных статей, N 3, Ереван, 2002, с. 5 – 6.

[6] Ж. Х а ч а т р я н. Отражение ахеменидских традиций в эллинистическом и позднеантичном периодах. – "Научные труды", вып. 3, Гюмри, 2000, с. 42 – 43.

նպատակը: Օկտավիանոսի խորհրդանշաններից է գունդը ձեռքին կամ դրան հենված հաղթանակի աստվածուհին: Անտոնիոսի դրամների մի մասի վրա, իր պատկերի ներքևում, գունդ է պատկերված[7]: Կնքադրոշմներից մեկի վրա, հանգիստ կանգնած այծեղջյուրի գավակին նստած է արծիվ, իսկ դիմացն արմավենու ճյուղ է (աղ. I, 14): Նման հորինվածք կա նաև եղջերվի (աղ. I, 13) գուգորդմամբ: Մի այլ կնքադրոշմի վրա եղջերուն կերակրում է ձագին, մեջքին նստած է արծիվ (աղ. I, 16), մի ուրիշում եղջերուն (ձախ) թռիչքային վիճակում է, արծիվը կանգնած է մեջքին, դիմացը կիսալուսին է, առավել ուշագրավ է եղնիկի գլխին և մեջքին կանգնած արծիվներով հորինվածքը (աղ. I, 15), ինչպես նաև վազող եղջերվի մեջքին արևի, իսկ գլխին նստած արծվի պատկերով կնքադրոշմը (աղ. I, 12): Այսինքն, բոլոր դեպքերում, շեշտվում է հորինվածքի պաշտամունքային բնույթը: Կնքադրոշմներից մի քանիսի վրա արծիվը կանգնած է վազող կամ հանգիստ կանգնած եղջերվի և արածող ձիու գավակին (աղ. I, 18):

Հայաստանի Հանրապետության տարբեր վայրերից պեղումներով և պատահաբար հայտնաբերված ապակյա բազմանիստ կնիքների մեջ առանձնանում է մի խումբ, որոնց վրա նույնանման պատկերներ կան (աղ. I, 21–26): Տարբերությունը կայանում է նրանում, որ վերջիններիս վրա արծիվները կանգնած են, ոտքերը գրեթե հորիզոնական առաջ պարզած (դեպի աջ), քառատրոփ սլացող եղջերուների, ձիերի, մեջքին և գլխին: Բազմանիստ կնիքները պատկանում են մ.թ.ա. II–I դդ.[8]: Գեմաները պատրաստված են մուգ կապույտ, կաթնավուն կամ կանաչավուն ցածրորակ ապակուց, ինչպիսիք Արտաշատում հայտնաբերված ապակյա թասերն ու անոթներն են, որոնք տեղական արտադրանք[9] են: Ամենայն հավանականությամբ, բազմանիստ գեմաները նույնպես պատրաստված են Արտաշատում: Հայաստանի բազմանիստներն իրենց ոճով, թեմատիկայով և նյութերով աղերսվում են Վրաստանում[10] և ժամանակակից Ադրբեջանի տարածքում գտնված գեմաներին, որոնք թվագրվում են մ.թ.ա. I–մ.թ. I դդ.[11] և չի բացառվում, որ գրանք պատրաստված լինեն նույն կենտրոնում:

Այդ թեման տարածված է նաև փոքր չափերի պլաստիկայում: Արտաշատից հայտնաբերված բրոնզե քանդակներից մեկը պատկերում է վեցաստիճան բրգաձև պատվանդանին դրված եղջերվի գլխին հանգիստ կանգ-

---

[7] Н. А. Машкин. Принципат Августа. М.—Л., 1949, с. 214—215, 268, 329.

[8] Երկ. 18-20մմ, լայն. 11-15մմ, բարձր.(հասա.) 5–8մմ, Ժ. Դ. Խաչատրյան. Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները.— «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1965, N1, էջ 375–376, նկ. 4,5: Նույնի՝ Հնագիտական հայտնագործություններ Գեղադիրում.— «Լրաբեր հաս. գիտ.» (այսուհետև՝ ԼՀԳ), 1966, N1, էջ 92, Օ. Ս. Խնկիկյան. Նորահայտ հուշարձան Գորիսում.— ՊԲՀ, 1981, N4, էջ 312–314, նկ. 3,1:

[9] Ж. Д. Хачатрян. Стеклоделие в древней Армении (II—I века до н.э.).— "Историко-филологический журнал" (далее — ИФЖ), 1975, №1, с. 257.

[10] М. Н. Лордкипанидзе. Иберийские копии с малоазийских гемм позднеахеменидского времени.— "Вестник отделения общественных наук" АН ГрузССР, Тбилиси, 1969, № 6, с. 116, 117, табл. VI, 98, 99; К. Джавахишвили. Памятники глиптики городища Урбниси (геммы Гос. Музея Грузии, V), Тбилиси, 1972, N130.

[11] К. А. Джавахишвили. Указ. раб., N130; Ю. М. Гагошидзе. Могильники Триалети. Каталог III.— "Могильники античной эпохи", Тбилиси, 1982, с. 67—74.

նած արծվի(բարձր. 8.2սմ), իսկ երկրորդ քանդակում քառաստիճան բրգաձև պատվանդանին նստած արծվի[12] (բարձր. 7.5 սմ): Երկու արձանիկն էլ կատարված են բավականին կոպիտ և ունեն ընդհանրացված մշակում (աղ. II, 2, 3):

Իրենց կատարյալ մշակումով, վերոհիշյալ արձանիկներից տարբերվում են Արտաշատից բերված արծվի երկու հորինվածք: Առաջինը բրոնզե աստիճանաձև պատվանդանի վրա, ատտիկյան խարիսխով սյան կորնթական խոյակին հաղթական գիրքով կանգնած արծվի արձանիկն է (բարձր. 10սմ): Սյան մշակումը նման է կավե արձանիկների վրայի սյուներին, որոնց վերին կեսը ուղղահայաց առևակոսներով է հարդարված (աղ. III, 1, 2): Կորնթական խոյակներ հայտնի են Բագարանի միանեֆ եկեղեցուց, որոնք երկրորդ օգտագործմամբ են: Ըստ Ն. Տ. Տոկարսկու,[13] դրանք վերցված են նախաքրիստոնեական շրջանի մի շինությունից: Արծիվը և խոյակը մանրամասն մշակված են: Այն աղերսվում է Կոմագենեի՝ Նեմրուդ լեռան, Կարաքուշի, Նիմֆայոսի ափի Արսամեայի և այլ հիերոթեսիոնների (դամբարան-սրբավայր) սյուների վրա կանգնեցված առյուծի և արծվի քանդակների հետ (աղ. III, 3–5)[14]: Թվագրվում են մ.թ.ա. I դ.: Պալմիրայում հայտնաբերված սյան վրա կանգնած արծիվը մեր օրինակից տարբերվում է միայն բացված թևերով[15]: (մ.թ. IIդ.) Արտաշատից գտնված նման երկրորդ արձանիկը արծաթից է(բարձր. 2.6սմ), որի ներքևի մասում պահպանվել են ինչ-որ բանի վրա փակցված լինելու հետքեր, հավանաբար, այն նույնպես կանգնած է եղել սյան վրա (աղ. III, 6-8):

Վերոհիշյալ հորինվածքները պատահական չեն: Սյունն ի սկզբանե ընդունվել է որպես «համաշխարհային ծառ»(կենաց ծառ), իսկ խոյակը որպես այն ձևավորող նշան: Ուստի պատահական չէր, որ դրանց վրա կանգնեցված էին պաշտամունքային կենդանիներ, որոնք քրիստոնեության ընդունումից հետո փոխարինվեցին թևավոր խաչով:

Փարիզի Լուվրում պահվող Արագածից գտնված օրինակում, ի տարբերություն նախորդների, բրգաձև պատվանդանը և սյունը փոխարինված են եղջերվի քանդակով (աղ. II, 1, 4): Այստեղ արծիվը նստած է հանգիստ կանգնած եղջերվի եղջյուրին[16](երկուսն էլ ձախ, բարձր. 15սմ): Տվյալ օրինակում արծիվն ավելի լավ է մշակված, քան եղջերուն, դրանով շեշտվում է արծվի կերպարի գլխավոր խորհրդանիշ լինելը: Այս բրոնզե քանդակները թվագրվում են II–I դդ.: Լուվրի արձանիկը աղերսվում է հյուսիս-արևմտյան Իրանից (իրանական Ադրբեջան) հայտնաբերված, եղնիկի գավակին հաղթական կեցվածքով կանգնած արծվի բրոնզե քանդակին[17], որը

---

[12] Б. Н. Аракелян. Очерки по истории искусства Древней Армении (VI в. до н.э. – III в. н.э.). Ереван, 1976, с. 79, табл. XCIII-XCIV, *Ժ. Դ. Խաչատրյան. Արտաշատի VII բլրի 1973–1975թթ. պեղումների արդյունքները.– ԼՀԳ, 1978, N8, էջ 67–68:*

[13] Н. М. Токарский. Архитектура Древней Армении. Ереван, 1964, с. 36 – 37.

[14] Д. Шлюмберже. Эллинизированный Восток. М., 1985, с. 47, рис. 35, 36.

[15] *Նույն տեղում, նկ. 82:*

[16] Б. Н. Аракелян. *Նշվ. աշխ., էջ 79, աղ.* XCV: S t. P r z e w o r s k i. Le culte du cerf en Anatolie.– "Notes d'archeologie Syrienne et Hittite". Syria, XXI, 1940, p. 63–67, fig. 1.

[17] H. M a h b o u b i a n. Art of Ancient Iran. London, 1997, fig. 336.

թվագրվում է մ.թ.ա. II–I դդ.: Եղնիկը պատկերված է կողքից և ունի ընդհանուր մշակում, իսկ մեջքին կանգնած արծվի մշակումը կատարելության է հասցված: Այս արձանիկը շատ նման է Բեռլինի թանգարանում[18] պահվող խեթական բրոնզե քանդակին:

Ուշագրավ է Արտաշատից գտնված սպիտակ քարից պատրաստված արծվի արձանիկը[19] (վերջույթները չեն պահպանվել): Պարզորոշ ընդգծված են թևերը, որոնք զբաղեցնում են ծավալի կողմնային մասերի ամբողջական հատվածները: Թևերի վրա պայմանականորեն արված են փորագիր գիգզագաձև և եռանկյունաձև գծեր: Զգացվում է, որ այն ունեցել է բավական խրոխտ կեցվածք, հենվել է մարմնի ստորին մասում տեղադրված զանգվածային պատվանդանին: Ծավալի հոյակապ զգացումով հիանալիորեն մշակված է թռչունի կրծքի մասը: Այստեղ մենք ունենք վերոհիշյալ բրոնզյա արծվաքանդակների նման մի արձանիկ, որը թվագրվում է մ.թ.ա. II–I դդ.:

Սիսիանի իշխանական դամբարանից հայտնաբերված հինգ մեդալիոններից երեքի վրա արծիվներ են պատկերված, որոնցից երկուսը, հաղթական դիրքով կանգնած են մեջքի վրա անօգնական ընկած, ոտքերը տարածած ոճավորված գազանի փոքրին[20]: Երեքի գլուխներն էլ ետ են թեքված, ինչպես Տիգրան II-ի դրամների վրա: Արծվի դիմային հատվածը վերարտադրված է չափազանց մանրամասն ու հստակ: Քանդակի նման չեչտվածությունը, ակներևաբար, իր մեջ բովանդակում է արծվի պատկերը որպես խորհրդանիշ ընդգծելու իմաստ, որովհետև նրա զոհը դարձած կենդանին, անհամեմատ ավելի ընդհանուր մշակում ունի: Հիանալի վերարտադրված են թռչունի համաչափությունները և ընդհանուր ծավալը: Կենդանու վրա կանգնած գիշատիչ թռչունի(արծվի) պատկերով հորինվածքը տարածված է եղել նաև Իրանում: Այդ են վկայում Նիսայից հայտնաբերված կնքադրոշմները[21], որոնք ժամանակակից են Արտաշատի արխիվներին: Այստեղ երկու դեպքում արծիվը կանգնած է չորքոտանու մեջքին, իսկ մի օրինակի վրա՝ եղջերվի մեջքին կանգնած, կտցահարում է կենդանու մեջքը, որը գլուխը ետ է դարձրել: Ենթադրվում է, որ այս հորինվածքը կապված է թագավորի հաղթական որսի թեմայի հետ, թռչունը բազե է, և վզին ժապավեն ունի: Մինչդեռ պատկերը գծանկար է, և այդ կարծիքը համոզիչ չի թվում: Դրանք պարզապես արծվի թևերն են:

Արծիվն ամենատարածված աստվածացված թռչունն էր, հին աշխարհի շատ ժողովուրդների առասպելներում աստվածների խորհրդանիշն ու նրանց սուրհանդակը[22]: Արծիվը խորհրդանշում էր երկինքը, արևը, հա-

---

[18] St. Przeworski. Նշվ. աշխ., էջ 67, նկ. 4:

[19] Ժ. Դ. Խաչատրյան. Արտաշատի..., էջ 70, տախտ. III, 8:

[20] Ժ. Խաչատրյան. Հայաստանի անտիկ շրջանի մեդալիոնները(մ.թ.ա. II–մ.թ. Iդդ.).– ԼՀԳ, 1978, N5:

[21] М. Е. Массон, Г. А. Пугаченкова. Оттиски парфянских печатей из Нисы.– "Вестник Древней истории" (далее – ВДИ), 1954, N4, с. 163, N 9–11; A. Bader. Little-Known Materials of Parthian Sphragistics and Epigraphy (Sealings from Old Nisa, Turkmenistan).– BCH, Suppl. 29, N 9–11, p. 398, fig. A.

[22] Мифы народов мира (далее – МНМ), II, 1988, с. 258–260.

մարվում էր արքայական թռչուն[23]: Այն հանդիսանում էր նաև ներքին(անդրշիրիմյան) և վերին աշխարհները իրար հետ կապող, որով էլ աղերսվում էր ջրի(ծովի) հետ[24]:

Արծվի պաշտամունքը լայն տարածում ուներ նաև Հայաստանում: Այն հանդիպում է մ.թ.ա. III հազ. հուշարձանների (Քարաշամբ և այլն) վրա: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Մեծամորի մ.թ.ա. XV–XIV դդ. թվագրվող քրմի դամբարանից հայտնաբերված բրոնզե բուրվառը[25], որի ունկերը արծվի գլուխներ են: Թռչնակերպ կանթերով բուրվառ է գտնվել նաև Լոռի բերդի №15 դամբարանից[26](ուշ բրոնզի դարաշրջան): Ըստ երևույթին, երկու դամբարաններում էլ թաղվածները եղել են Արևի աստծո տաճարի քրմեր: Արծվի պատկերը հաճախ է հանդիպում բրոնզե գոտիների վրա: Այն տարածված էր նաև ուրարտական շրջանում: Ուրարտական արվեստում հայտնի քարե զարդատուփի վրա փորագրված, կենաց ծառի շուրջ կանգնած արծվի գլխով(դիմակով) ու թևերով մարդը, ըստ երևույթին, ներկայացնում է Արևի աստծուն[27]: Ըստ որում, կենաց ծառը վերևում ավարտվում է արծվի ոճավորված հերալդիկ պատկերով: Արծվի նման հերալդիկ պատկեր է փորագրված նաև Արևմայան Հայաստանից գտնված բրոնզե գոտու (մ.թ.ա. VIII–VII դդ.) վրա, հեծյալ Շիվինի աստծու և գլուխը ետ դարձրած առյուծի միջև[28] և այլուր (աղ. II, 8):

Արծվի գլխով և թևերով մարդ է պատկերված նաև կրծքազարդերի (պեկտորալ) վրա, այստեղ նա ձեռքերին ունի սրբազան հեղուկով անոթ և ծաղիկ[29]: Ըստ երևույթին դա Արծիբիդինի անունով աստվածն է «Արծիվ աստված» ձևով[30], կամ նրա քուրմը: Արծիվը որպես աստվածների սուրհանդակ է պատկերված Սերբար-թեփեի բրոնզե թիթեղների[31] վրա: Իշպուինի որդի Մենուա թագավորի(մ.թ.ա. 810–786թթ.) հռչակավոր ձին, որը

---

[23] O. K e l l e r. Die antike Tierwelt. Leipzig. 1909, S. 1-6; А. И. В о щ и н и н а. О связях Приуралья с востоком в VI-VII вв. н.э.— "Советская Археология" (далее — СА), XVII,1953, с. 184.

[24] В. Г. А р д з и н б а. Ритуалы и мифы древней Анатолии. М., 1982, с. 88-90, 207, ссыл.115; МНМ, II, Энциклопедия. М., 1988, с. 258—260, лит. там же, Հ. Ռ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում. Երևան, 1973, էջ 101-114, Հ. Ա. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. Գիտությունն սկսվում է նախնադարում. Երևան, 1978, էջ 41–42:

[25] Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Քրմի դամբարան Մեծամորում.— ՊԲՀ, 1997, N2, էջ 239–240, նկ. 1, E. K h a n z a d i a n. Metsamor 2, La necropole. Vol. I, Les tombes du bronze moyen et recent. Neuchâtel-Paris, 1995, p. 42–55, fig. 16.

[26] Նույն տեղում:

[27] Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту). М., 1959, Табл. XLIX, տես նաև таол. I, Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության կրոնը. Երևան, 1990, աղ. 21:

[28] Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Նշվ. աշխ., աղ. 20,1, Urartu- Metalworking Center in the First Millenium B.C., Jerusalem, 1991, p. 151, fig. 10.

[29] Urartu- A Metalworking..., p. 86, 87, fig. 42, 44.

[30] Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 58–60:

[31] Նույն տեղում:

պատկել է 22 կանգուն, կոչվում է Արծիբի՝ արծիվ[32]: Արծիվ բառը հնգեվրոպական բառ է և հայերենից է անցել ուրարտերենին[33]:

Հելլենիստական և ուշ անտիկ շրջանում արծվի պաշտամունքի նշանակությունն ուժեղանում է և ավելի է տարածվում, ձեռք բերելով արևի աստվածության լրացուցիչ հատկանիշներ: Շարունակելով ավանդական թեմաները, հանդես են գալիս նորերը: Ուշագրավ է Արտաշատի կնքադրոշմներից մեկը (աղ. I, 7), որի վրա երկու արծիվ կանգնած են զոհասեղանին: Սա նոր հորինվածք է, որը շեշտում է նրա սրբազան թռչուն լինելը, պաշտամունքային բնույթը: Այդ է վկայում նաև Կոմագենեից գտնված կնքադրոշմը, որտեղ զոհասեղանին նստած, գլուխը ետ դարձրած արծիվը պատկերված է երկու սյուների մեջ ամփոփված խորանում[34], որը խորհրդանշում է տաճար: Կնքադրոշմներից մեկի (աղ. I, 10) թեման կայծակի վրա կանգնած արծվի հորինվածքն է, որտեղ թևերը բացած արծիվը գլուխը թեքել է դեպի ձախ. դա Յուպիտերի կարևորագույն հատկանիշն էր[35]: Այն աղերսվում է Սիսիանի նույնանման հորինվածքով մեդալիոնի հետ: Նման պատկերով մի կնքադրոշմ հայտնի է Կոմագենեից[36] (մ.թ.ա. III–IIդդ.): Դրա վրա Ֆորտունային պսակադրող Վիկտորիան է, իսկ վերևում՝ Հելիոսի կիսանդրին է, ներքևում՝ կայծակի վրա կանգնած թևատարած արծիվը[37]: Արծվի և կայծակի պատկերները հաճախ են հանդիպում Պտղոմեանների և Սելևկյանների դրամների վրա: Փոքր Ասիայում ևս այն տարածված է եղել հատկապես Միհրդատ IV Եվպատորի ժամանակ: Այն խորհրդանշում է Զևսին: Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել կանգնած, աջ ձեռքին կայծակ բռնած, Զևսի բրոնզե արձանիկները, որոնցից մեկը մ.թ.ա. IVդ. է, իսկ մնացածը ուշ անտիկ շրջանի: Դրանք Լաոխարի արձանի, ինչպես անտիկ հեղինակներն են անվանել, Շանթաձիգ Զևսի ընդօրինակություններն են, որը մեծ մասսայականություն է վայելել[38]: Որպես Զևսի խորհրդանիշ, հունական արվեստում արծիվը պատկերվել է գահավորակին նստած Զևսի աջ ձեռքին: Մեր կնքադրոշմին (աղ. I, 12) Զևսն է արծվի վրա:

Պալմիրայի (մ.թ.ա. I – մ.թ. III դդ.) Բաալ-Շամինի տաճարի բարձրաքանդակներում պատկերված են Հելիոսը(արևին մարմնավորող պատկեր) ճառագայթավոր պսակով, հերալդիկ գիրքով կանգնած արծիվներ, արևի ճառագայթներից բաղկացած վանդակներ[39], սյուների մեջ ամփոփված խո-

---

[32] Б. Б. Пиотровский. Նշվ. աշխ., էջ 151.

[33] Г. Б. Джаукян. Урартский и индоевропейские языки. Ереван, 1963, с. 133, նույնի՝ Урартские заимствования в армянском языке.— "Культурное наследие Востока", Л., 1985, с. 369:

[34] M. Maaskant-Kleibring. Cachets de terre. Bulletin antike Beschaving. Jaahrgang XLVI, 1971, N 76, fig. 87; A. G. Furtwangler. Beschreibung der geschnittenen, steine im Antiquarum, Konigliche Museum Zu Berlin, B., 1896, N 6027-6032; P. Fossing. Catalogue of the Antique Engraved Gems and Cameos, the Thorvaldson Museum, 1929, N 1643.

[35] Ժ. Խաչատրյան. Հայաստանի անտիկ շրջանի մեդալիոնները, տախտ. I, 4:

[36] M. Maaskant-Kleibring. Նշվ. աշխ., նկ. 35, N25:

[37] Նույն տեղում, նկ. 60, N50:

[38] Г. Д. Белов. Бронзовые статуэтки из Херсонеса.— "Античная история и культура Средиземноморья и Причерноморья", Л., 1968, с. 23—24, рис. 1.

[39] Д. Шлюмберже. Նշվ. աշխ., էջ 82–85, նկ. 72:

*բանի մեջ, աթոռին նստած է աստվածուհին, իսկ սյուների վրա հենված եռանկյունու մեջ պատկերված են Հելիոսի երկու կողմում կանգնած, թևերը բացած արծիվներ[40]: Արծիվներով և արևի այլ խորհրդանիշներով պատկերներ կան նաև Պալմիրայի Բելի տաճարի բարձրաքանդակներում[41]: Հաթրայում, որը սրբազան քաղաք էր և արևի աստված Շամաշի պաշտամունքի կենտրոնը, Բել աստծու արձանի կուրծքը զարդարված է Հելիոսի կիսանդրիով, իսկ թևերը տարածած երկու արծիվ վաթաթված են ոտքերին[42]:*

*Արծվի առանձին կամ զուգորդված կերպարը տարբեր կենդանիների հետ վաղ շրջանի կնիքների և արվեստի այլ ստեղծագործությունների սիրված ու տարածված թեմաներից[43] էր: Ցլի, առյուծի և այլ կատվազգիների, չնազայլի, ընձուղտի, այծեղջյուրի մեջքին նստած թռչունի թեման Առաջավոր Ասիայում հայտնի էր հնագույն ժամանակներից՝ IV–III հազարամյակից: Այն հանդիպում է Եգիպտոսում, Սիրիայում, Պաղեստինում, Իրանում[44], Միջագետքում[45], Փոքր Ասիայում[46]:*

*Ուշագրավ են օձի վրա կանգնած, թևերը բացած, արծվի հորինվածքով կնքադրոշմները (աղ. I, 9): Գիլգամեշի էպոսում (Միջագետք), շատ այլ ժողովուրդների առասպելների նման նկարագրություններում, արծիվը կապված է համաշխարհային ծառի գագաթի, իսկ օձը՝ արմատի հետ[47]: Այգպես է նաև համահնդեվրոպական պատկերացումներում: Արծվի պայքարում օձի հետ, արծիվը մարմնավորում էր արևը, օձը՝ որպես մահաբեր, կապվում էր լուսնի, երկրի հետ: Օձը բոլոր դիցաբանություններում խորհրդանշում էր պտղաբերությունը, կապված էր նաև ջրի, տան օջախի, կրակի(հատկապես երկնային), կնոջ՝ որպես պտղաբերողի, տղամարգու՝ որպես բեղմնավորողի հետ: Օձը հունական իմաստության աստվածուհի Աթենասի հատկանիշներից մեկն[48] է: Արտաշատի և անտիկ աշխարհի նման պատկերներով գեմաները և արվեստի այլ գործեր վկայում են այդ թեմայի կենսունակությունը: Առասպելական աշխարհում ամենաուժեղ կենդանին՝ առյուծը և թռչուններից ամենահզորը՝ արծիվը, հաճախ միացյալ կերպարով էին հանդես գալիս, առյուծագլուխ արծիվ(արծվառյուծ), ինչպես չումերական Անձուդը[49]:*

*Ուշադրության արժանի են եղջերվի, այծի և ձիու հետ արծվի զուգադրությամբ հորինվածքով կնքադրոշմները: Եղջերվի ու այծի պաշտամունքը խոր արմատներ ունի և գալիս է շատ հնուց: Դրանց պատկերները հան-*

---

[40] *Նույն տեղում, նկ. 73:*

[41] *Նույն տեղում, նկ. 80–82:*

[42] *Նույն տեղում, էջ 111, 128, նկ. 121, 123:*

[43] D. L. W i s e m a n. Gotter und Menschen. Im Rollsiegel Westasiens. Prague, 1958, S. 11, 12.

[44] H. M a h b o u b i a n. *Նշվ. աշխ., նկ. 231 (1000-800թ. մ.թ.ա.):*

[45] B. T e i s s i e r. Glyptic Evidence for a Connection between Iran, Syro-Palestine and Egypt in Fourth and Third Millenia. Vol. XXV, Iran, 1987, s. 27-49, fig. 7.

[46] St. Przeworski. *Նշվ. աշխ., նկ.* 2, 3, В. З а м а р о в с к и й. Тайны хеттов. М., 1968, рис. на с. 233.

[47] МНМ, II, с. 258 – 260.

[48] МНМ, I, М., 1987, с. 468 – 470.

[49] В. К. А ф а н а с ь е в а. Гильгамеш и Энкиду. М., 1979, с. 32, 98,103, рис. 7a, b, 13a, b; МНМ, II, 258 – 260.

դիպում են ժայռապատկերների, խեցեղենի, կնիքների, գեղարվեստական մետաղի վրա: Եղջերուն և այծը պաշտամունքային որսի տեսարանների հիմնական կենդանիներն[50] են: Պաշտամունքային բնույթի շատ պատկերներում եղջերվի և այծի ֆիգուրաներին ուղեկցում է արևը, սվաստիկայի, վարդյակի կամ սկավառակի ձևով[51]: Եղջերվի պաշտամունքը կապված էր Արևի պաշտամունքի հետ, ըստ Վ. Արձինբայի ենթադրության, ծագում է փոքրասիական(խեթերի) հնադույն ավանդույթներից[52]:

Խեթական, նեսիտական դիցաբանության ու ծիսակատարության մեջ եղջերուն հանդիսանում էր Արևի աստվածության սրբազան կենդանին: Ենթադրվում է, որ խեթերի մոտ եղել է եղջերվի հատուկ տոնակատարություն[53]: Եղջերվի կերպարը հնդեվրոպական միջավայրում ամենուրեք ներկայացված է համաշխարհային ծառի վերևում[54]:

Վաղ բրոնզեդարյան շրջանից սկսած, խեցեղենի և մետաղի վրայի պատկերների որսի տեսարաններում, եղջերուներն ու այծերը մշտապես առկա են: Ուշ բրոնզե դարաշրջանից հանդիպում են նաև այծի ու եղջերվի ծավալային քանդակները[55]: Եղջերվի պաշտամունքին նվիրված պատկերներից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Քարաշամբի շքեղ դրվագազարդումով հարդարված արծաթե գավաթի վրայի հորինվածքը: Ենթադրվում է, որ եղջերուն, որին տանում են քրմերը, նախատեսված է ծիսական զոհաբերության համար և հանդես է գալիս որպես պաշտամունքի առարկա[56]: Եղջերվի պաշտամունքի հիանալի օրինակ է նաև Ալաջա-Հույուկից հայտնաբերված, մ.թ.ա. XIV–XII դդ. թվագրվող խեթական արծաթե ռիտոնը, որը գլխամասում ավարտվում է եղջերվի քանդակով: Կենդանու իրանին, դրվագման եղանակով, եղջերու է պատկերված, որի մեջքին կանգնած է աստվածություն(Արևի՞), ձեռքին թռչուն(արծիվ՞), իսկ եղջերվի առջև կանգնած քուրմը հեղում է կատարում[57]: Նման թեմա հայտնի է Մալաթիայից գտնված խեթական բարձրաքանդակի վրա[58]: Հայաստանում եղջերվի պաշտամունքը շարունակվում է նաև ուրարտական և հետագա դարաշրջաններում: Երզնկայի մոտ, Ոսկեբլուր (Ալթին թեփե) կոչված բարձունքի վրա(բարձր. մոտ 60մ) բացված ուրարտական դամբարանում, այլ արժեքավոր նյութերի թվում գտնվել է նաև փղոսկրե մի քանդակ, որը

---

[50] Г. Е. А р е ш я н. Индоевропейский сюжет в мифологии населения междуречья Куры и Аракса II тысячелетия до н.э. — ВДИ, 1988, N 4, с. 84 — 102, Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Քրմի դամբարան Մեծամորում, էջ 240–248, նկ. 2:

[51] А. Н. З о г р а ф. Античные монеты. М. — Л., 1951, с.151, Табл. XXXVI, 13 (մ.թ.ա. 110–108 թթ.); Г. Е. А р е ш я н. Նշվ. աշխ., էջ 93–94:

[52] В. А р д з и н б а. Նշվ. աշխ., էջ 16–17, 65, նկ. 1:

[53] Նույն տեղում, էջ 99:

[54] Г. Е. А р е ш я н. Նշվ. աշխ., էջ 98:

[55] Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 243.

[56] В. Э. О г а н е с я н. Серебряный кубок из Карашамба. — ИФЖ, 1988, N4, с. 154-155.

[57] Von Troja bis Amarna. The Norbert Schlimmel Collection New York. Meinz-Rein, 1978, Abb. N 133, Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 243, J. M e l l a r t. The Archaeology of Ancient Turkey. London, 1978, p. 64; В. О г а н е с я н. Նշվ. աշխ., էջ 154:

[58] В. О г а н е с я н. Նշվ. աշխ.:

պատկերում է կենաց ծառի առջև կանգնած(աջ), դլուխը ետ դարձրած եղջերու[59]:

Հետաքրքիր է նաև Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված, արծաթյա եղջերագավաթը[60] (մ.թ.ա. VI–IV դդ.), ինչպես նաև Աթարբեկյանից գտնված, հերալդիկ դիրքով դեմ դիմաց ցատկող եղջերուների ոճավորված պատկերով սկարաբեոիդը[61] (մ.թ.ա. V–IV դդ.):

Եղջերվի պաշտամունքը լայն տարածում է ստանում հելլենիստական և ուշ անտիկ շրջանում: Այդ են վկայում վերոհիշյալ բրոնզե արձանիկները, կնիքներն ու կնքադրոշմները: Արտաշատից (VIII բլ.) գտնվել է նաև ձգված իրանով երկկանթանի եզակի մի սափոր (ռիտոն), որը ներքևում ավարտվում է եղջերվի երկու գլխով[62] (մ.թ. I դ.): Սրանց բերանի մասում անցքեր են արված: Գլխամասը եղջերվի քանդակով ավարտվող կավե մի գեղեցիկ գավաթ (ռիտոն) էլ հայտնի է Մինգեչաուրից[63](մ.թ.ա. I–մ.թ. I դդ.): Այստեղ եղջերվի եղջյուրների միջև ճակատին եղևնաձև ծառ է փորագրված, իսկ գավաթի իրանը հարդարված է ուղղահայաց գծերի մեջ արված ալիքաձև զարդերով(օ՞ձ):

Հետաքրքիր է, որ եղջերվի պաշտամունքը լայնորեն տարածված էր նաև միջնադարում: Դիցաբանական եղջերուն հայկական զարդարվեստի քրիստոնեական թեմաներում հանդիպում է VI դ. մինչև մեր օրերը (Աղց՝ 364 թ., Քասաղ, Երերույք, Ծոպք՝ մ.թ. IV–V դդ., Աղթամար, մանրանկարներ և այլուր): Եղջերուն խաչի և Քրիստոսի խորհրդանշանն է, կապված է Աստվածամոր հետ, այն նույնացված է մկրտության խորհրդի, քրիստոնեական նահատակների, քարոզիչների, առաքյալների, զղջացողների, հավատացյալների և նման ուրիշ հասկացությունների հետ[64]:

Այծը նույնպես հնագույն պաշտամունքային կենդանիներից է: Այծի պատկերը Առաջավոր Ասիայում հանդիպում է դեռևս V հազարամյակում և շարունակվում է մինչև մեր օրերը: Այծը պաշտամունքի առարկա է եղել առաջին հերթին իր բացառիկ սեռականության, արգասավորության, պտղաբերության շնորհիվ: Այն կապված է աստվածների և մյուս դիցաբանական կերպարների հետ[65]: Այծը հնդեվրոպական ավանդույթում կայծակի, ամպրոպի կենդանակերպն է: Այծը կապվում է նաև անդրշիրիմյան աշխարհի հետ: Մահացածի համար այծի հատուկ զոհաբերություն էր կատարվում, որպեսզի այն օգնի հանգուցյալի վերածննդին[66]: Այծի կերպարը շատ տարածված է հերալդիկայում[67]:

---

[59] Մ. Իսրայելյան. Ուրարտական մի հուշարձան երգնկայի մոտ.– ՊԲՀ, 1967, N4, էջ 314, նկ. 3:

[60] Armenie. Tresors de l'Armenie ancienne des origines au IVᵉ siecle. Paris, 1996, N184.

[61] А. О. Мнацаканян. Раскопки могильников у селения Атарбекян в Армянской ССР.—"Краткие сообщения Института истории материальной культуры" (далее — КСИИМК), 1955, N 6, рис. 9:2.

[62] Z. D. Khachatrian. Նշվ. աշխ., նկ. 41:

[63] Н. И. Рзаев. Искусство Кавказской Албании IV в. до н.э.— VII в. н.э. Баку, 1976, с. 25—26, рис. 15.

[64] Ա. Մնացականյան. Դիցաբանական եղջերուն միջնադարյան հայ արվեստում.– «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1977, N12, էջ 7–49:

[65] МНМ, I, էջ 663:

[66] МНМ, I, էջ 663; Г. Е. Арешян. Индоевропейский сюжет, с. 94—95.

[67] МНМ, I, էջ 663:

Ձիու վրա նստած արծվի հորինվածքը, ինչպես վերը նշեցինք, նորություն չէ, այն հանդիպում է նաև գեմաների[68] մեջ (աղ. I, 23, 24): Ձին, նույնպես, հին աշխարհում հայտնի էր իբրև սրբազան, Արևի աստծուն նվիրված կենդանի: Բոլոր հնդեվրոպական ժողովուրդներն արևը պատկերում էին ձիու, մարտակառքի կամ անիվի ձևով: Ռիգվեդայում, Ավեստայում, հունական պոեզիայում արևը կոչվում է արագաձի, իսկ նրա ճառագայթները համեմատվում էին ձիու ծածանվող բաշի հետ[69]: Հնդեվրոպական տրադիցիայում ձին հանդես էր գալիս որպես միջնորդ երեք աշխարհների միջև, այդ առումով էլ այն համարժեք էր համաշխարհային ծառին[70]: Ձիու զոհաբերության արարողությունը համընդհանուր հնդեվրոպական ծիսակատարություն էր, որտեղ ձին հանդես էր գալիս իբրև «համաշխարհային կենդանի» համաշխարհային ծառի նման[71]: Ձիու ծիսական թաղումը Առաջավոր Ասիայում կապվում է հնդեվրոպացիների հետ, դա ընդունված էր Հայկական լեռնաշխարհում, խեթերի, իրանցիների և վոքրասիական հնդեվրոպական ցեղախմբերի մոտ: Հայկական բարձրավանդակում ձիաբուծության հետ ծանոթացել են մ.թ.ա. IV–III հազարամյակում[72], իսկ մ.թ.ա. III հազարամյակում ձիաբուծությունն այնքան է զարգացել, որ ձի է արտահանվել մի շարք հարևան երկրներ[73]: Սակայն, ձիու պաշտամունքը հանդես է գալիս մ.թ.ա. II հազարամյակի վերջին և I հազարամյակի սկզբին[74]: Ձիու վրա նստած արծվի հորինվածքը, Արևի աստծու երկու խորհրդանշանների համատեղումը, հզորացնում է այդ աստվածությանը և ուժեղացնում դրա մոգական ազդեցությունը, դառնում հաջողության թալիսման:

Եզակի օրինակներից է նապաստակի գլխին և մեջքին դեմ դիմաց կանգնած արծիվների հորինվածքով կնքադրոշմը (աղ. I, 17): Նապաստակը վաղուց է հայտնի հին արևելյան արվեստում: Հայաստանում մ.թ.ա. III–I հազարամյակների դամբարաններում հանդիպում են նաև ծեսի մեջ օգտագործված նապաստակի ոսկորներ: Նապաստակը պատկերվել է նաև խեթական և ուրարտական արվեստում: Ալաջա Հույուկից հայտնի է մի հերալդիկ պատկեր, որտեղ երկգլխանի, աջ ու ձախ թեքած գլուխներով արծիվը

---

[68] Ժ. Դ. Խաչատրյան. Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները.– ՊԲՀ, 1965, N1, էջ 375–376, նկ. 4, 5:

[69] В. В. Иванов. Использование этимологических исследований сочетаний однокоренных слов в поэзии на древнеиндоевропейских языках.– "Этимология", М., 1969, с. 54.

[70] В. В. Иванов. Опыт истолкования древнеиндийских ритуальных и мифологических терминов, образованных от asva- конь".– В сб. "Предметы истории языков и культуры народов Индии". М., 1974, с. 94–95.

[71] В. В. Иванов. Лошади и колесницы у древних индоевропейских племен.– "Народы Азии и Африки", М., 1968, N 2, с. 239.

[72] Ս. Ա. Եսայան. Ձին Ուրարտուի ռազմական գործում.– ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1962, N2, էջ 77–79:

[73] Б. Б. Пиотровский, Н. Д. Флитнер. История техники древнего Двуречья.–"Очерки по истории техники Древнего Востока", М.–Л., 1940, с. 38.

[74] Е. Е. Кузьмина. Распространение коневодства и культа коня у ираноязычных племен Средней Азии и других народов старого света.– "Средняя Азия в древности и средневековье (история и культура), М., 1977, с. 34–35.

*ներկայացված է թևերը հորիզոնական բացած, յուրաքանչյուր ոտք մի նապաստակի վրա դրած[75]: Արծկեի (Քեֆ-Կալեսի, Ադիլջևազ) ուրարտական բարձրաքանդակի պարսպի Աշտարակների միջև, եռաստիճան ելուստների վրա, կենաց ծառի երկու կողմում, դեմ դիմաց կանգնած արծիվները կտուցով բռնել են նապաստակ[76]: Էրեբունիում հայտնաբերված խեցեղեն անոթներից մեկի հատակի մոտ դրոշմված է նապաստակ[77]: Նապաստակի պատկերը լայնորեն տարածված էր տափաստանային ժողովուրդների, այդ թվում եվրոպական սկյութների մոտ[78]: Այն սկյութների առասպելական նախահոր մարմնավորումն էր, որը կապված էր անտիկ աշխարհում նապաստակին վերագրվող արտակարգ բարձր պտղաբերության հետ[79]: Նապաստակը իր այդ հատկանիշի շնորհիվ կապվում էր ստորերկրյա աշխարհի հետ և այլն: Որոշ ուսումնասիրողներ նապաստակը կապում են Հերոդոտոսի հաղորդած պարսկա-սկյութական չկայացած պատերազմի հետ[80], ըստ որի, ճակատամարտի պատրաստ երկու բանակների միջև հանկարծ նապաստակ է հայտնվում: Սկյութները շարքերը թողած աղմուկ աղաղակով վազում են նրա հետևից: Դարեհը տեղեկանալով ինչումն է բանը, համարում է, որ սկյութները արհամարհում ու ծանակում են իր բանակը: Դա վերագրելով նրանց հզորությանը, գիշերը բանակով հեռանում է պատերազմի դաշտից: Սկյութների պատկերացմամբ նապաստակի զոհաբերությունը հաջողություն է բերում: Նապաստակ հանդիպելու դեպքում պետք է անպայման բռնել, եթե ոչ մեծ փառք կկորցնես[81]:*

*Համարվում է, որ առկա սակասկյութական մշակութային հանրությունը ձևավորվել է տարբեր մարդաբանական ուրույն կոմպոնենտների հիմքի վրա, որոնք հնարավոր է, որ լինեին էթնիկապես տարբեր: Ուկրաինայի, հարավռուսաստանյան տափաստանների, Կովկասի, Հայկական լեռնաշխարհի, Առաջավոր և Միջին Ասիայի, Ղազախստանի և Ալթայի մ.թ.ա. II–I հազարամյակների հնագիտական հուշարձաններից հայտնաբերված 47 գանգաբանական հավաքածուների ներկայացուցչական ընտրության հա-*

---

[75] В. Н. Топоров. К происхождению некоторых поэтических символов.— В сб. "Ранние формы искусства", М., 1972, с. 95; А. Р. Демирханян. К мифопоэтическим истокам геральдических композиций (в связи с интерпретаций урартского рельефа из Кеф-Калеси).— В сб. "Культурное наследие Востока", Л., 1985, с. 138, рис. 5.

[76] E. Bilgiç, B. Odün. Excavations at Kef Kalesi of Adilgevaz, 1964.– "Anatolia", Vol. 8, 1965, fig. 2; А. Демирханян. *Նշվ. աշխ., էջ 137, նկ. 4:*

[77] С. И. Ходжаш. Оттиски урартских печатей на керамике из Эребуни.— "История и филология Древнего Востока". XI Годичная научная сессия ЛОИВАИ, М., 1976, N125.

[78] А. И. Шкурко. Звериный стиль в культуре и искусстве Лесостепной Скифии: Автореф. дис. канд. ист. наук, М., 1975, с. 17, табл. 1; А. С. Островерхов, С. Б. Охотников. О некоторых мотивах звериного стиля на памятниках из собрания Одесского археологического музея.— ВДИ, 1989, N2, с. 61.

[79] Д. С. Раевский. Из области скифской космологии (опыт семантической интерпретации пекторали из Толстой могилы).— ВДИ, 1978, N3, с. 127.

[80] *Հերոդոտոս. Պատմություն ինը գրքից (թարգմ. Ս. Կրկյաշարյան). Երևան, 1986, IV, էջ 134:*

[81] Д. С. Раевский. Модель мира скифской культуры. М., 1985, с. 60—63; А. С. Островерхов, С. Б. Охотников. *Նշվ. աշխ., էջ 62:*

մեմատական վիճակագրական վերլուծությունը բավարար քանակի ձևաբանական ընհանրություններ է բացահայտում մերձսևծովյան սկյութական և Կովկասի ու մասնավորապես Հայաստանի նրբակազմ տարբերակների հետ[82]:

Սկյութական «կենդանակերպ» ոճը ("звериный стиль") շատ ընդհանրություններ ունի արևելյան ուրարտական, ասորեստանյան, սիրոփյունիկյան արվեստի հետ, որ Հայաստանի հնագիտական հուշարձանների պեղումների ժամանակ հայտնաբերվում են մինչև մ.թ.ա.VIIIդ. պատկանող տերևաձև նետասլաքներ, ակինակներ և այլն: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Արտաշատի VIII բլրի մ.թ. Iդ. շերտից հայտնաբերված, նապաստակի որսի տեսարանով կավե արձանիկը, որը եզակի է և իր հորինվածքով տարբերվում է մյուս, Միհրին պատկերող, կավե արձանիկներից: Այն պատրաստված է տեղական կավից, ամենայն հավանականությամբ տեղում: Շատ հնարավոր է, որ վերոհիշյալ կնքադրոշմը, նույնպես տեղական է, և ժամանակակից կավե արձանիկին: Այսինքն, նապաստակը և նապաստակի որսը Հայաստանում տարածված է եղել:

Առանձին ուշադրության է արժանի դելֆինի վրա կանգնած արծվի հորինվածքը (աղ. I, 20): Այն հանդիպում է Միլետի հիմնադրած Սև ծովի ափի գաղութներում, Սինոպում, Իստրիայում, Օլվիայում: Այն ոչ միայն Սինոպի դրամների վրա է պատկերվում, այլև դառնում է Սինոպի սրբազան զինանշանը, որից հետո չնչին փոփոխությունների ենթարկելով, այն ընդունում են Իստրիան և Օլվիան[83]: Այն ժամանակի ընթացքում զարգացում է ապրում: Արտաշատի կնքադրոշմի պատկերը համեմատաբար ուշ տիպերից է (մ.թ.ա. II-Iդդ.):

Սինոպը արտադրական և առևտրական խոշոր կենտրոն էր[84]: Օլվիա, Իստրիա և ընդհանրապես այլ վայրեր են արտահանվել յուղ, գինի, կղմինդրներ, ճարտարապետական այլ հարդարանքներ և հատուկ տեսակի կարմիր ներկ[85]: Վերոհիշյալ հորինվածքում դելֆինը համադրվում է Ապոլոնի հետ, որը Միլետի և դրա գաղութների գլխավոր աստվածն էր: Հոնիական մերձափնյա քաղաքներում նա առաջին հերթին պաշտվում էր որպես առևտրի հովանավոր, և իր այդ հատկանիշի համար էլ կոչվում է Դելֆինիա: Ապոլոն Դելֆինիային նվիրված տաճարներ, զոհասեղաններ և սրբազան տարածքներ ու պուրակներ կային: Որպես ծովագնացության հովանավորի և ծովագնացների պաշտպանի, Ապոլոնը սկզբնապես ինքը ներկայանում էր դելֆինի կերպարով: Դելֆիններն իրենց մի շարք հատկա-

---

[82] Ռ. Մկրտչյան, Ա. Փիլիպոսյան. Ասքանազյան ազգի և Թորգոմի տան ժառանգաբանական խնդիրների շուրջ, Հայոց սրբերը և սրբավայրերը, ակունքները, ախվերը, պաշտամունքը. Երևան, 2001, էջ 388–391, Ա. Ս. Փիլիպոսյան, Ռ. Ա. Մկրտչյան. Գեղհովտի Վանտոսպյան Ուրարտական քարայր-դամբարանը. Երևան, 2001, էջ 40-45:

[83] П. О. Каришковский. Об изображении орла и дельфина на монетах Синопы, Истрии и Ольвии.— В. сб. "Нумизматика античного Причерноморья". Киев, 1982, с. 80—84.

[84] М. И. Максимова. Античные города Юго-Восточного Причерноморья. М.—Л., 1956, с. 67—96; П. О. Каришковский. Նշվ. աշխ., էջ 85:

[85] И. В. Брашинский. Экономические связи Синопы в IV—II вв. до н.э.— В кн.: "Античный город". М., 1963, с. 135—146; П. О. Каришковский. Նշվ. աշխ., էջ 85:

նիշներով համարվում էին սրբազան կենդանիներ, կապվում ծովային աստվածների հետ[86] և համարվում էին նավաստիների փրկիչները:

Արծիվը հնագույն ժամանակների հույների համար ևս սրբազան թռչուն էր: Զևսի կայծակները աեզափոխողն ու սուրհանդակը, երկրային աշխարհների կապողը[87]: Զևսի զոհասեղանը գտնվում էր Միլետում, Դելֆինիայի տարածքում, որը վկայում է այդ երկու պաշտամունքների կապը: Պետական զինանշանում երկու խորհրդանշանների միացումը մի հորինվածքում, բացի պաշտամունքային և խորհրդանշական բովանդակությունից, ուժեղացնում էր դրանց նշանակությունը, և հզոր թալիսման էր ձկնորսության ու առևտրի համար[88]: Այսինքն, այս կնքադրոշմը փաստում է Սինոպի հետ Հայաստանի ունեցած առևտրական կապերի մասը:

Այսպիսով, արծիվը, թռչուններից ամենահզորը, ամենաաստվածացված թռչունն էր ու աստվածների խորհրդանշանը: Այն պատկերվել է և՛ մոնումենտալ, և՛ փոքր չափերի արվեստում, գլիպտիկայում, ինչպես առանձին, այնպես էլ տարբեր կենդանիների հետ միասին, զանազան հորինվածքներով: Վերջին ավանդույթը, ինչպես բազմանիստ կնիքներն ու փոքր չափի քանդակներն են ցույց տալիս, տարածված է եղել նաև Հայաստանում: Նման հորինվածքներով կնքադրոշմները նույնպես կարող են տեղական լինել: Տարբեր կենդանիների հետ արծվի զուգորդված զանազան հորինվածքների նպատակը տվյալ կենդանու սրբազան բնույթը, մոգական ազդեցությունն ուժեղացնելն էր, ավելի կատարյալ և հզոր ներկայացնելը[89]:

Մի կերպարի մեջ տարբեր կենդանիների մարմնի մասերը միացնելը բնորոշ էր հինարևելյան, հատկապես Ասորեստանի, Ուրարտուի արվեստին: Այդ ավանդույթն անցավ Աքեմենյան Իրանին և նոր ձևեր ընդունելով շարունակվեց հելլենիստական շրջանում: Վերոհիշյալ կնքադրոշմների մի մասը և փոքր չափերի բրոնզե ու արծաթե արձանիկները, ինչպես վերը տեսանք, տեղական են, վերջիններս և կնքադրոշմների մյուս մասը վկայում են Հայաստանի քաղաքական, տնտեսական (առևտրական), մշակութային կապերի մասին հելլենիստական աշխարհի, Հռոմի և հռոմեական արևելքի երկրների ու կենտրոնների հետ, ցույց են տալիս դրանց պաշտամունքների հետ ունեցած առնչությունները: Հռոմի քաղաքացիական պատերազմների ժամանակ քաղաքական պրոպագանդայի համար օգտագործված կնիքների վրայի պատկերները վկայում են Անտոնիոսի և Օկտավիանոսի ձգտումների ու այդ հակամարտության ոլորտի մեջ Հայաստանի ընդգրկված լինելու մասին: Կնքադրոշմներն ու փոքր չափերի քանդակները հարստացնում են մեր գիտելիքները նաև Հայաստանի և մյուս երկրների կերպարվեստի և կնիքագործության մասին: Կնքադրոշմների հետագա քննությունը կնպաստի նշված հարցերի ավելի հանդամանալի ուսումնասիրությանը:

---

[86] Նույն տեղում, էջ 86:

[87] Նույն տեղում, էջ 88:

[88] Նույն տեղում, էջ 88–90:

[89] В. Б. Б л е к. К вопросу об истоках скифо-сарматского звериного стиля.— В сб. "Скифо-сибирский звериный стиль в искусстве народов Евразии". М., 1976, с. 30—31; А. П. М а н ц е в и ч. Находки в Запорожском кургане (к вопросу о сибирской коллекции Петра I), там же, с. 177.

Աղ. I

1

2

3

4



8

5

6

7

Աղ. II




Աղ. III

## ПЕЧАТИ, ГЕММЫ И СТАТУЭТКИ С РАЗЛИЧНЫМИ КОМПОЗИЦИЯМИ ОРЛА

*ЖОРЕС ХАЧАТРЯН*

Р е з ю м е

Среди обнаруженных в Арташате архивов печатей, гемм и статуэток есть группа предметов, на которых изображен орел в различных композициях. Все эти предметы относятся ко II в. до н.э. – I в. н.э. Орел был самым обожествленным существом среди животных, являлся символом и вестником неба и богов. Его изображение распространено и в геральдике. В Армении оно встречается еще на памятниках II тыс. до н.э. (Карашамб, Мецамор, Лори берд и др.), урартских бронзовых поясах, пекторалях, каменных сосудах и предметах из других материалов. В эллинистический и позднеантичный период культ орла еще более распространяется и приобретает дополнительные свойства и функции солнечного божества. Вместе с традиционными темами с изображением орла появляются новые сюжеты. Орел изображается как в отдельности так и стоящим на животном и в других композиционных вариантах. Целью композиций с изображением стоящего на различных животных орла являлось подчеркивание божественного характера этой птицы, ее мощи и совершенства и усиление ее магического воздействия. Соединение в одном образе частей тела различных животных было характерно для искусства древнего Востока, особенно Ассирии и Урарту. Эта традиция продолжалась и в дальнейшем. Часть печатей, бронзовые, серебряные, каменные статуэтки и геммы имеют местное происхождение. Другая группа печатей с изображением стоящего на сфере (земном шаре) орла и т.д. свидетельствует о политических, экономических (торговых), культурных, религиозных связях Армении с эллинистическим миром, Римом и странами и центрами римского Востока. Использование в целях политической пропаганды этих изображений на печатях периода гражданских войн в Риме свидетельствует о стремлениях Антония и Октавиана, втянуть Армению в сферу их соперничества. Печати, геммы и предметы мелкой пластики обогащают наши знания об изобразительном искусстве и глиптике Армении и других стран.

## SEALS, GEMS AND FIGURINES WITH DIFFERENT COMPOSITIONS OF EAGLE

ZHORES KHACHATRYAN

S u m m a r y

Among the archives of seals, gems and statuettes found from Artashat there is a group of objects with the image of an eagle in different compositions. All these objects are attributed to the 2nd c. B.C. – 1st c. A.D. The eagle was one of the most deified beings among the animals. It was

the symbol and the herald of the sky and gods. Its image is spread also in heraldry. In Armenia it is represented already in sites of the 2nd mill. B.C. (Karashamb, Metsamor, Lori Berd etc.), on Urartian bronze belts, pectorals, stone vessels and objects of other materials. In Hellenistic and Late Antique periods the cult of the eagle was more spread and acquired additional characteristics and functions of a solar divinity. Alongside with traditional themes with the eagle's depictions new themes appear. The eagle is being represented separately as well as standing on an animal and other compositional variants. The aim of the picture with the eagle standing on different animals was to underline the divine character of this bird, the reinforcement of its magic impact, as well as its strength and perfection. The jointing of parts of different animals in one image was characteristic to the art of the ancient East – Assyria and Urartu, in particular. This tradition was continued later on. A part of seals, bronze, silver and stone figurines and gems has local provenience. Another group of seals with the image of an eagle standing on the sphere (the Earth) etc. testifies the political, economic (trading), cultural and religious ties of Armenia with the Hellenistic world, Rome, as well as the countries and the centers of the Roman East. The use of these images on the seals of the period of civil wars in Rome with a view of political advocacy testifies the endeavors of Antonius and Octavianus to involve Armenia into the sphere of their rivalry. The seals, gems and objects of fine plastic art enrich our knowledge on the fine arts and glyptics of Armenia and other countries.